



ԺՈՒՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆ, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒԵԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱԽՈՍ՝ 0312 30622

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"

POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA, (0312 30622)

EMAIL: INFO@ASPAREZ.AM WWW.ASPAREZ.AM

ՀՀ Հեռուստատեսային և ռադիոյի ազգային հանձնաժողովի
Նախագահ Գ.Ամալյանին
Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՅԿ խորհրդի նախագահ,
ՀՀ քաղաքացի Լ.Բարսեղյանից,
Հասցե. Հայաստան, 3102, Գյումրի, Պուշկինի փ., 96

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՅՈՒՄ - 2

Պարոն Ամալյան,

Ես 2007 թվի նոյեմբերի 15-ին Ձեզ հարցում էի ուղարկել, որում խնդրում էի ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները, եթե այդպիսիք տնօրինում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը.

1. Ո՞ր հեռուստաընկերություններն ու ռադիոկայաններն են պարբերաբար տեղեկություններ տրամադրում ՀՌԱՀ-ին իրենց հաղորդումների թեմատիկ ծավալների մասին: Ի՞նչ պարբերականությամբ են նրանք ՀՌԱՀ-ին տրամադրում այդ տեղեկությունները:
2. Երբվանի՞ց է սկսել գործել հեռուստաընկերություններից ու ռադիոկայաններից իրենց հաղորդումների թեմատիկ ծավալների մասին ՀՌԱՀ-ին պարբերաբար տեղեկություններ տրամադրելու կարգը, եթե այդպիսի կարգ, այնուամենայնիվ, կա:
3. Ի՞նչ օրենք(ներ)ի, կամ ենթաօրենսդրական ակտ(եր)ի, կամ պաշտոնական հրաման(ներ)ի հիման վրա են հեռուստաընկերություններն ու ռադիոկայանները կատարում ՀՌԱՀ-ին իրենց ծրագրերի թեմատիկ ծավալների մասին պարբերաբար ու մշտապես տեղեկություններ տրամադրելու պարտականությունը, թե՞ նրանք այդ անում են կամավոր: Եթե այս հարցի վերաբերյալ առկա են համապատասխան ակտեր (օրենք, ենթաօրենսդրական ակտ, հրաման, արձանագրություն կամ այլ փաստաթուղթ), խնդրում եմ նշել իրավական ակտերի անվանումները, ընդունման ժամանակը, հոդվածը, մասը, եւ այն պաշտոնական աղբյուրը, որտեղ հրապարակվել են դրանք:

2007 թվի դեկտեմբերի 5-ին, ստացել եմ ՀՌԱՀ Լիցենզավորման և մեթոդական վարչության լիցենզավորման բաժնի պետ Ա.Արզումանյանի պատասխանը. 22.11.2007 N 05-275, որում ասվում է.

«...Ձեր 15.11.207 գրությամբ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին առաջադրված հարցադրումներին պատասխանելու համար Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, խնդրում եմ պարզաբանել.

1. Որո՞նք են տեղեկությունների ստացման հատուկ ստուգման ընթացակարգերը եւ ո՞ր իրավական ակտով է դա նախատեսված,
2. Ի՞նչ էք նկատի ունեցել «ծրագրերի թեմատիկ ծավալներ» ասելով:

Պարոն Ամայան,

ես, առաջին հարցումը կազմելիս, ենթադրում էի, թե իմ հարցման նախաբանում բերված առաջին երկու պարբերություններում բավարար հստակությամբ ներկայացրել եմ իմ հարցման դրդապատճառները¹, բայց պարզվում է, միամտություն եմ ունեցել կարծելու, թե ՀՌԱՀ նախագահիդ եւ հանձնաժողովի համապատասխան աշխատակիցների համար դրանք այնքան են հեշտ ընկալելի, որքան՝ ինձ եւ այլոց:

Ափսոսանք եմ հայտնում այդպիսի խրթին նախաբանի համար: Պարզաբանման Ձեր խնդրանքը հուշում է, որ ՀՌԱՀ-ից տեղեկություններ հարցնելիս շռայլություն է հիմնավորումներին եւ մեկնաբանություններին ուշադրություն դարձնելը: Կարծել եմ, թե հարցմանս նախաբանի բացատրությունները եւ հարցմանս մանրամասները կօգնեն Ձեզ ու ՀՌԱՀ աշխատակիցներին ավելի լավ կողմնորոշվել ինձ հետաքրքրած տեղեկությունների մասով: Այնինչ, պարզվում է, դա հնարավորություն է տալիս Ձեզ ձգձգել տարրական տեղեկությունների տրամադրման գործընթացը: Այսպիսով, պարզեցնելով խնդիրը եւ խնայելով այն պետական միջոցները, որ ծախսում եք ինձնից պարզաբանումներ ստանալու համար, վերածեակերպում եմ հարցերս: Խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ո՞ր հեռուստաընկերություններն ու ռադիոկայաններն են պարբերաբար տեղեկություններ տրամադրում ՀՌԱՀ-ին իրենց հաղորդումների մասին: Ի՞նչ պարբերականությամբ եւ ի՞նչ ձեւերով են նրանք ՀՌԱՀ-ին տրամադրում այդ տեղեկությունները:
2. Կա՞ր ՀՌԱՀ-ին հեռուստաընկերություններից եւ ռադիոկայաններից տեղեկություններ տրամադրելու որեւէ կարգ: Եթե այո, ապա երբվանի՞ց է սկսել գործել այդ կարգը եւ ո՞րն է այդ կարգը:
3. Ի՞նչ օրենք(ներ)ի, կամ ենթաօրենսդրական ակտ(եր)ի, կամ պաշտոնական հրաման(ներ)ի հիման վրա են հեռուստաընկերություններն ու ռադիոկայանները կատարում ՀՌԱՀ-ին իրենց հաղորդումների մասին պարբերաբար տեղեկություններ տրամադրելու պարտականությունը, թե՞ նրանք այդ անում են կամավոր: Եթե այս հարցի վերաբերյալ առկա են համապատասխան իրավական ակտեր (օրենք, ենթաօրենսդրական ակտ, հրաման, արձանագրություն կամ այլ փաստաթուղթ), խնդրում եմ նշել իրավական ակտ(եր)ի անվանում(ներ)ը, ընդունման ժամանակը, հողվածը, մասը, եւ այն պաշտոնական աղբյուրը, որտեղ հրապարակվել են դրանք:

Խնդրում եմ հարցմանս պատասխանելու փոխարեն ինձնից չխնդրել «տեղեկություն», «ենթաօրենսդրական ակտ», «պաշտոնական աղբյուր», «հաղորդում», «կարգ», «կամավոր», «պարբերաբար» եւ այլ բառերի ու բառակապակցությունների մեկնաբանություններն ու պարզաբանումները: Համարեք, որ ես օժտված չեմ այդ անելու առաքելությամբ կամ լիազորությամբ, իսկ Ձեր աշխատակազմը, կարծում եմ, ցանկության դեպքում կարող է

¹ « ... Ինձ հասած տեղեկություններով, ՀՀ տարածքում գործող հեռուստաընկերությունները եւ ռադիոկայանները պարբերաբար՝ ամսական երկու անգամյա պարբերականությամբ, ՀՌԱՀ-ին են տրամադրում որոշակի տեղեկություններ իրենց ծրագրերում տեղ գտած հաղորդումների ծավալների մասին, մասնավորաբար՝ տեղեկություններ այն մասին, թե օրական քանի թույլ լրատվական ծրագրեր են հաղորդել, քանի թույլ գովազդ, եւ այլն: ... Ես, ուսումնասիրելով ՀՀ «Հեռուստատեսության եւ Ռադիոյի մասին», «ՀՌԱՀ Կանոնակարգ», «Գովազդի մասին» օրենքները, ՀՌԱՀ աշխատակազմի կանոնադրությունը, չգտա այն իրավական կոնկրետ հիմքը, որի հիման վրա ՀՀ ՀՌԱՀ-ն իրավագոր է այդ տեղեկությունները առանց հատուկ ստուգման ընթացակարգերի ստանալ հեռուստաընկերություններից եւ ռադիոկայաններից, ու չգտա այն իրավական այն կոնկրետ հիմքը, որի հիման վրա հեռուստաընկերությունները եւ ռադիոկայանները պարտավոր են իրենց ծրագրերի թեմատիկ ծավալների մասին մշտապես տեղեկություններ տրամադրել ՀՌԱՀ-ին: Չբացառելով, որ ես, որպես ոլորտի զարգացմամբ մտահոգ կազմակերպության ղեկավար ու քաղաքացի, չեմ տիրապետում ինչ-ինչ տարրական տեղեկությունների, այս հարցմամբ խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները. ...» 15.11.2007

մեկնաբանել իմ հարցման բովանդակությունը բավարար քաղաքավարական եւ իրավագիտական պատշաճությամբ:

Պատրաստ եմ վճարել ինձ տրամադրվելիք հարցված տեղեկությունների պատճենահանման ծախսերը: Պատճենման հնարավոր ծախսերի վճարման համար, խնդրում եմ նամակով ինձ տրամադրել Հանձնաժողովի դրամային հաշվի համարը:

Տեղեկությունների տրամադրումը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որը տիրապետում է այս նամակով հարցվող տեղեկություններին:

Եթե վերելում հարցված տեղեկությունները կամ դրանց մի մասը երբեւէ հրապարակվել է զանգվածային որեւէ լրատվամիջոցով, ապա, խնդրում եմ գրավոր տեղեկացնել այդ հրապարակման կամ հրապարակումների տեղի եւ թողարկման կամ թողարկումների համարների մասին:

Տեղեկություններ հարցնող՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ խորհրդի նախագահ,
ՀՀ քաղաքացի
Լ.Բարսեղյան

8 դեկտեմբերի, 2007